ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հունիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում դիվանագիտական առաքելությունն ավարտող Հնդկաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռինա Փանդեին:

Նորին Սրբությունը, հրաժեշտի իր բարեմաղթանքներն ուղղելով տիկին Փանդեին, հաստատեց, որ անցնող տարիներին առանձնահատուկ ջերմությամբ են հատկանշված եղել հարաբերությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ ՀՀ-ում Հնդկաստանի դեսպանության միջեւ: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ այն ազնիվ օգտակարություններին, որ դեսպանատունը բերել է Հնդկաստանում իր հովվապետական այցի կազմակերպման, ճեմարանականների՝ օտար լեզուների իմացության խորացման գործում, ինչպես նաեւ այն ուշադրության, որ Հնդկաստանի պետությունը մշտապես ցուցաբերել է Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի նկատմամբ: Խոսվեց նաեւ հայ-հնդկական հարաբերությունների եւ այդ շրջանակներում իրականացվելիք տարբեր ծրագրերի մասին:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հունիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց պաշտոնական այցով Հայաստան ժամանած Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Բաշար Ալ-Ասադին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդյանի:

Ողջունելով մեծարգո հյուրի այցը համայն հայության սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր ուրախությունը հայտնեց, որ բազմադարյա հարաբերությունները երկու երկրների միջեւ անխաթար կերպով, բարեկամական նույն ջերմ զգացումներով շարունակվում են եւ առավել ամրապնդվում նոր համագործակցությամբ եւ իրագործումներով: Նորին Սրբությունը նախագահի այցը Հայաստան նոր խթան համարեց այդ համագործակցության առավել զորացման համար:

Հայոց Հայրապետը վերհիշեց իր այցելությունը Սիրիա՝ Հալեպ եւ Դեր-Զոր, եւ հաստատեց Սիրիայի ժողովրդի հյուրընկալ ոգին եւ իշխանությունների հոգատար վերաբերմունքը սիրիաբնակ հայորդիների նկատմամբ՝ հավելելով, որ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա Սիրիայի եղբայր ժողովրդի աջակցությունը, որ ցուցաբերվեց Մեծ եղեռնից մազապուրծ եղած հազարավոր հայերի հանդեպ: Հայոց Հայրապետը նաեւ խոսեց միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերությունների մասին՝ աշխարհի առաջ ծառացած հիմնախնդիրների լուծման գործում կարեւոր համարելով հոգեւոր առաջնորդների համերաշխ համագործակցությունը ի սեր ժողովուրդների բարօրության: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդ-